46. ԵՍ ԱՍՏԾՈՒ ՕՂՈՐՄՈՒԹԵՆ ԿՀ'ՈՒԶԻՄ

Կէղնի, չէղնի իրեկ մարդ կէղնին։ Էդոնք հ'իրարու դրկից կէղնին։ Կէլնին խոսքեր ուրանց մեկ կէնին, կասին՝ էրթանք խուրրաթ, աշխատինք։

Ըշթա շատ կէրթան, քիչ կէրթան, կէրթան թագավորի էրկիր կէլնեն դուրս։ Կէրթան խահվախանե մը մսաֆըր կէղնին։ Էդ իրեկ լե զուրանց խոսքեր հմալ ին էրած, օր մեկտեղ աշխատին, մեկտեղ դառնան հետ։

Հ'իրկուն կէղնի։ Կնստին խահվեն ու կխորհրդին։

Կասե էն մեկն.— Խոզի լուսուն կանչեր թագավոր զիս, իտեր հարիր օսկի, դառնեք էրթենք իմ տուն։

Էն մեկել լե կասե.— Խոզի զիս լե կանչեր, իտեր հարուր օսկի ու զուր ախչիկ, դառնեք էրթենք իմ տուն։

Էն մեկելից կհարցուն.— Դու ի՞նչ կուզիս։

Կասե.— Ես բան չըմ հ'ուզի, ինչ կէնեմ զթագավորի փարեն, ես աստծու օղորմութեն կուզեմ։

Էդ հ'իրկուն թագավոր ու ուր լալեն կէլնին թարգիր խըլըղի օլըրտեն։ Կիգան կանին էդ խահվախանի փանջարի տակ, կլսին զէղոնց զրուցկ, կթողեն կէրթան։ Արթըխ լուսուն օր կելնին, զուրանց խահվեն կխմեն, չըն խմի, թագավոր կասե ուր խահվըչներուն, թե՝ գացեկ ֆլան խահվեն իրեկ մարդ կա, առեք ու էկեք։

Կիգան, կառնեն զէդ մարդիկ, կէրթան, կտանեն թագավորի մոտ։

Օր կտանեն թագավորի մոտ, թագավոր էն հ՚առչի խոսողին կասե.— էն ի՞նչ էր հ՚իրկուն դու կխոսեր խահվախանի մեջ։

Մարդ կվախենա, կասե.—Բան չըմ ասեր ի։

Թագավոր կասե.— Մը վախենա, ինչ օր խոսացեր իս խահվի մեջ. զօղորդ ասե։

Մարդն կասե.— Թագավոր ապրած, հ՚իրկուն նստա, միտկս հ՚ընկավ իմ տուն ու տեխ։ Ճըճկոյացի, ասի՝ «Խոզի լուսուն կանչեր զիս թագավոր, իտեր հարիր օսկի ընծիկ, դառնեք էրթենք իմ տուն»։

Ասեց.— Առ քզիկ հարիր օսկի, դառցի գնա քու տուն։

Էնի քաշվավ մեկ դին։

Ըստ հաղ զմեկել մարդ կանչեց, ասեց.— Հ՚իրկուն դու ի՞նչ էր կասեր խահվախանի մեջ քու ընկերոջ։

Ասեց.— Բան չըմ ասի։

— Զօղորդն ասե, ջանըմ, հ՚որի՞ կպահիս, ես լսեր եմ, տես քու հ՚ընկեր իմալ զօղորդն ասեց։

Ասեց.— Ես լե ճըճկոյա, ասի՝ «Խոզի թագավոր կանչեր զիս, իտեր էրկու հարիր օսկի ու զուր ախչիկ, դառնենք էրթենք իմ տուն»։

Բերեց տվեց զախչիկն ու խուրճի մը օսկի, ասեց.— Քանի օր վասր՝ իմ էրի, էդա լե քզիկ, գնա քու էրկիր։

Էկավ հ՚ետինեկի վրեն կանավ։ Ասեց.—Տղա՛, դու ի՞նչ կուզիս։

Տղեն ասեց.—Ես բան չըմ հ՚ուզի, թագավորի փարեն ի՞նչ կէնիմ, ես աստծու օղորմութեն մինակ կուզիմ։

Էդ հըմալ օր ասեց, թագավոր հերսոտավ, ասեց.— Դեմակ, դու զիս բանի տեխ չըս դնի, դու աստծու օղորմութեն կուզի՞ս։

Ինատ էրեց, հերսից թալեց, թալալ տվեց կանչել, օր տաս փարա չի տան էդ տղին, հ՚ուր օր լե կտեսնան թըքուն ու նավլըթեն, էնին դուրս։

Էրեց օյին ու օյինպազ, էձգեց քաղքի մեջ։

Տղեն է, հ՚ելավ գնաց քաղքի մեջ, հ՚ուր օր գնաց, թըքուցին հ՚երես, էրին դուրս։ Նը հաց տվին, նը փարա։

Ընկերներն է, հագած են խփած, կխրխրան, իսկի չըն ասի, թե էդա մըր հ՚ընկերն է, մեկտեխ՝ենք էկի, մեկտեխ պետկ էր էրթենք էրկիր։

Բըլե տղեն զուր ումուտ աստծուց իսկի չկտրե։

Թագավորն է, զախչկա օտկ ու ձեռկ տեսավ, զճըհեզ էրեց, բերեց թաքրարան մեկ-մեկ խուրճի օսկի փեսին ու էդ տղին տվեց, ճամբու դրեց, օր էրթան հ՚երկիր։

24—915

Էդ էրկու տղեն է, տեսան օր ուրանց հ'ընկեր ինչ օր փոշի մաղիս վրեն, քաղքի լենկ ու հ'երկենք կէրթա, կիգա։ Ասին.—Տղա, ինատչութեն չարա չէնե, քանի օր թագավոր իլանաթ էրեր է, օր քզիկ էդա քաղքի մեջ հ'երես չիտան։ Էկո, մենք կէրթանք հ'երկիր, մտի մեր հետ կյամին, տանեք թողինք ուրիշ քաղաքըմ, էրթանք, բալքիմ քու հ'երես իշքեն, քզիկ գործըմ իտան։

Տղեն բան չասեց, հ'եր օր էկան կէրթեն, գողտուտիկ հ'ընկերներու հետ մտավ կյամին ու էկան։

Հաշարաթնե, ծովու պոկից բարի մնաց էղան, դառցան հետ, կյամին զգուխ թողեց։

Թե էրկու, թե իրեկ ավուր ճամբախ էկան, լոտոզըմ էղավ ծովու վրեն. կոտորում, փոթորիկ մը հ'ելավ, աստված ինկ նշանց չիտա, կյամին բանդմիշ էղավ, մնաց մեկ կտոր տախտակ։

Էն տղեն օր կասեր՝ ես աստծու օղորմութեն մինակ կխնդրիմ, մնաց կպուկ տախտկի մեկ գլուխ, թագավորի ախչիկ լե մեկ գլուխ, ուր ճրհեզով ու մալերով մեկտեղ։

Քամին զարկեց, տարավ պռուկըմ հանեց դուրս զէդ տախտակ։

Տղեն էրեց, օր ինկ հ'ելնի էրթա, ախչկան անկաճ չէնե։

Ախչիկն ասեց.—Ախբր աստված զիս քըզիկ նասիր ու ըռըսխ էրեց, էնգոնկ բաթմիշ էղան գացին, մանցինք ես ու դու. բռնե զիմ ձեուկ, հ'ելնեք, առնեք զիրար էրթանք։

Տղեն ասեց.— Քու հոր հարամ մալ ընծի հարամ է էղի, դու լե ընծի պետկ չես։

Ախչիկ ջատ յալվար-յախա էղավ, տղեն բռնեց հանեց, առան զիրար ու էկան ուրիշ քաղաքըմ հ'ելան դուրս։

Էկան ուրիշ քաղաքըմ հ'ելան դուրս։ Ախչիկն ասեց.—Գնա մզիկ տունըմ բռնե, էրթանք մտնենք մեջ, հրմլա փողցներ մնալով չէղնի։

Հ'ելան էկան, տունըմ վարձեց, էկավ առավ զախչիկն ու գնաց։

Ախչիկ նստավ մեկ դին, ինկ լե՝ մեկ դին։ Լուսումութ օր կէղներ, կէլներ կապեր զուր գոգնոց վրեն, կէրթեր աշխատելու։ Ըռընճբրութեն կէներ, հ'իրկուն կդառներ կիգեր։ Հ'իրկուն օր կդառներ կիգեր, ախչիկ ինչ կէներ, թե՝ աստված զիս ախբր խըսմաթ քզի էներ է, էկո առ զիս, պառկի իմ խեչ, տղեն անկաճ չէներ, կէձգեր զուր տեխ, ջոկ տեխ կպառկեր, ախչիկ լե՝ ջոկ տեխ։

Օրըմ լուսուն էդ տղեն մեկ լե հ'ելավ, գնաց շուկեն, մեյդան կանուկ էր։ Ցահուդի մը էկավ հ'ռաստ, ասեց.—Տղա՞, իրղատ չես բանի՞։

Տղեն ասեց.— Հ'որի՞ չըմ բանի։

Զհախ կտրեց ու առավ գնաց ուր տուն։ Տարավ ներսով ներս, բա-

ցեց մըղազե մը դուռ, էնեց դուրս ու ասեց.—Զէդա օսկիք կտեսնա՞ս, կկուլոնիս վիրարու, հ՚իրկուն կիգամ, իտամ ղքու հախ, էրթաս։

Ցահուդին է, զտղեն հըմալ տկլոզցուց, օր էրեց իմանի չիփլաղ, չէղնի փարա դողներ, փակեց զդուռ տղի վրեն ու թորկեց գնաց։

Հ՚իրկուն դառցավ էկավ, տեսավ օր տղեն զօսկին կուլոներ է վիրարու։ Հանեց դուրս, տվեց զուր շորեր, հագավ, հախ տվեց, թորկեց գնաց ուր տուն։

Օլոր օր էմլե հ՚ելավ հ՚իշավ մեյգան, յահուդին հ՚ռաստ էկավ, առավ գնաց։ Ներսով ներս բացեց դուռըմ, էրեց ներս, ասեց.—Կտեսնա՞ս զէդա մեշոկներու միջու հավկթներ, հ՚ըմեն անգին քար է, կհանես զէդ հավկթներու բամբակ կփոխիս, թաժա բամբակ կդնես, հար հ՚իրկուն ես դառնամ հ՚իգամ։

Մեկ լե զտղեն տկլոզցուց, զհալվըներ առավ վրայեն, օր բան չգողնա։

Էդ յահուդին է, ավլատ-թավլատ չուներ, ինք թաք զոհիդ մարդըմ էր։

Հ՚իրկուն օր էղավ, յահուդին էկավ, բացեց զմըղազի դուռ, զտղեն հանեց դուրս, տվեց զհալավ հագավ, տվեց զուր հախ, թողեց գնաց ուր տուն։

Տղեն է, արթըխ քիչ-քիչ հաջողութեն գտավ։

Մեկեր օր մեկ լե հ՚ելավ գնաց, յահուդին հ՚ռաստ էկավ։ Առավ տարավ, ըստ հաղ ուրիշ մըղազե մը մտուց, օր հ՚ըմեն սպիտակ փարա էր, ասեց.— Զէգրանց տեխ կփոխիս, կշոջիս, շիտկիս, հար ես հ՚իգամ։

Բըլե զտղեն տկլոզցուցեր էր, մտուցի ներս։

Հ՚իրկուն օր էղավ, յահուդին դառցավ էկավ, տեսավ տղեն օր զարծաթ լե շրջեր շիտկեր է, հանեց դուրս, հագցուց զհալավ, տվեց զուր հախ, թողեց գնաց։

Իրեկ օրն օր թմավ, յահուդու գործ խըլըսավ, ըստ հաղ գնաց զուր ըոընեբրութեն էրեց։

Ախչիկն է, ինչ օր կէներ, տղի վրեն չէղներ. ախչկա մալին չմոտեներ, կասեր.—Ընծի հարամ է կեցի քու պաբու հարամ մալ։

Ախչիկ կասե.— Ջանըմ, դու աստծու օղորմութեն կուզեր, ըշթա աստծու օղորմութեն չէղներ, ես իմա՞լ կազատենք։

Տղեն նա էրեր է, նո չէներ։

Օրըմ լե կէրթա շոսկեն, կտեսնա օր թալալ կպոռա՝ ֆլան յահուդու տներ մազաթ է։ Տղեն կասե. «Զէղնի իմ յահուդու տներ էղնի»։ Կհարցու, կէլնի ուր յահուդու տներ։

Կէրթա մազաթ կզարկէ, ուրիշն ի՞նչ գինա ինչ կա յահուդու պատեղուց ներս, կհանէ թե տաս հազար, թե քսան հազար խրոռշ, զյահուդու տներ կառնէ։ Յահուդու տներ կիգա կանի տղի վրէն։

Տղեն կիգա ախչկան կասէ.— Ընծիկ էդա խրդար փարա տուր, առնեմ ձեռկըմ տուն, մեկլէ բերեմ զքու փարեն իտամ քի։

Կնիկն կասէ.—Ջանըմ, իմ փարեն ի՞նչ է, քումն ի՞նչ է, առ գնա։

— Չէ,— կասէ,— քու հոր հարամ մալ ընծիկ պետկ չէ։

Ախչիկ կիտա, կառնէ կէրթա։

Կէրթա զյահուդու տներ կառնէ, կքաջէ զտուն ու զկնիկ առնէ, կէրթա մեջ։

Հ՝իրկուն օր կէղնի, կնիկ կքնի, կասէ. «Կանի էրթամ բանամ, տեսնամ յահուդու մալեր տեխն ի՞ն, տեխ չեն»։

Կէրթա կբանա, կիշքէ օր հ՝մեն լէ տեխն են։ Կփակէ, կդառնա կիգա, կպառկի քնի։ Լուսուն կէլնի, կդնէ զթիակ վըր փեջին ու կէրթա մնկ լէ ուր ըռընճբրութենի հ՝ետևեն, ուր ըռընճբրութենից իսկի վազ չի գա, զուր չամռի, հողու ու քարու թարկ չի տա։

Ախչիկ ինչ կէնէ, վրեն չէղնի, զհալվըներ չփոխէ, ըռընճբրի հալվընեռով է։

Օրըմ լէ միտկ կփոխէ, կասէ. «Ես պիտի հ՝ելնեմ, քառսուն բեռ էդա անգին քարեր բռնեմ ճամբեմ, էրթա թագավորին»։

Կէլնի կբերէ քառսուն ջորի, կբառնա, էլ չասէ անգին քար է, կասէ. «Զէգա բամբըկներ առ, գնա թագավորին, ասէ ֆլան մարդն է ճամբեր»։ Խաթըրճին կէլնի, կառնէ կիգա, թագավորին կասէ՝ ֆլան ըռընճբարն է ճամբի։

Ձեն կցըվըրվի քաղքի մեջ, թե՝ ֆլան ըռընճբար քառսուն բեռ բամբակ է ճամբի էկի թագավորին, վրեն կծիծզան։ Ջանըմ, մարդ բամբակ լէ հատյա կճամբէ թագավորին, թագավոր ի՞նչ կէնէ զբամբակ։ Կթափեն կիգան, մեկ կասէ՝ թագավոր խելոկ էղնի, կդառցու կէրթա հետ, մեկ կասէ՝ հըմեն-հըմեն ճամբեր է, էկի, թըղ վերցու, տանէ թալէ մեկ դին։

Նիհայեթ, ինչ գլխու ցավանք էնեք, թագավոր հրաման կէնէ, կվերցուն, կտանեն ներս։

Օր կտանեն ներս, ինկն ուրեն կասէ. «Հալբաթ էդոր մեջ բանըմ կա, ես պիտի էրթամ բեռըմ, էրկու քակիմ, տեսնամ ի՞նչ կա դրուկ էդ բամբըկներու մեջ»։

Կիգա թայըմ էրկու կիտա քակել, ի՞նչ կտեսնա։ Կտեսնա օր մեկ-մեկ հավկիթի չափ անգին քար պլուլուկ ու դրուկ է բեռան մեջ։ Կվեր-

ցու, կառնե կիգա։ Կասե. «Ջանըմ, ես թագավորըմ իմ, իմ խազինի մեջ հըմլա անգին քար ու հըմլա բան չկա, էդի իմա՞լ ըռընճբար է, որ հըմ-լա բան ունի, քառսուն բեռ որ ընձիկ է ճամբի էկի, հըմկա ուրեն ի՞նչ խըտար կա»։ Կկանչե զուր վազիրն, կասե— Վազիր, էկո մտնեք թավռիբ խըլըղ, հ՚ելնեք օլըրտինք, էրթենք էդ ըռընճբրի տուն, էղնենք մսաֆըր, տեսնանք էդ իմա՞լ մարդ է, որ հըմլա բան ունի։

Թագավորն ու ուր վազիր կելնեն կմտնեն դարվեշի խըլըղ, քելման թե ամիսըմ, թե էրկու կիգան, կէլնեն ըռընճբրի քաղաք դուրս։

Կիգան կհարցուն՝ ֆլան ըռընճբրի տուն հ՚ու՞ր է։

Կցուցուն, կէրթան կանին ըռընճբրի սարեսներու հ՚առեշ, կպաղեն, կմնան, կասեն՝ էդ իմա՞լ ըռընճբար է, որ հըմլա քոշկ ու սարա ունի։

Թագավոր կասե— Էդոր սարեք լե իմ սարեսներու նման է։

Ջդուռ կզարկին, ախչիկ կիջնե բանա զդուռ, բըլե զինկ ցուց չի տա, ախչիկ վարավուրթ կէնե, որ ուր հերն է, ձեն չհանե։

Կիգա տուն, էնդոնկ լե կէրթան հ՚օդեն, կէփե հաց, խահվա կճամբե կէրթա։ Հ՚իրկուն ըռընճբարն է, չամռոտ, տըլթըթախ, թիակ վըր փեջին, կդառնա կիգա տուն։ Կասե.— Հաց բերեք ուտեմ։

Ախչիկ ճամբեց հաց. էկավ կերավ ու քաշվավ մեկ կողմ նստավ։ Իրեկ օր մնաց էդ տեսակ, ըռընճբարն կիգեր կուտեր զուր հաց ու կէրթեր պառկեր քներ։

Իրեկ օրն օր թմավ, դարվեշն է, վերուց ասեց.—Ըռընճբար, էդա իրեկ օր կէնե օր մենք նստեր ենք էդ։։ տեխ, չըս հարցու թե՝ դուք հ՚ո-րին եք էկի, մսաֆըր մեկ օր կէղնի, էրկու օր։

Ըռընճբարն ասեց.— Ի՞նչ ասեմ։

Դարվեշն վերուց ասեց.— Մենք էկեր ենք, որ զքզի տեսնանք ու էրթանք, դու ըռընճբարըմ ես, քու հալու հետ, էդ անգին քարեր հ՚ուստե՞ն է էղի քզիկ, ճամբեր էր էկի թագավորին։

Էդտեխ տղեն վերուց զուր գլխու գալած, իմալ որ մենք պատմինք, գլխեն մեկիկ-մեկիկ պատմեց* էդ դարվեշներուն. որ էկավ էն տեխ, ասեց. «Էդ շուն քուփաք թագավոր իսկի չասեց թագավորաց թագավոր աստված կա, դու հ՚իսնե չըս հ՚ուզի, աստծու օղորմութեն կուզիս», թա-գավոր թռավ, պագեց զըռընճբրի ճակատ։ Ասեց.—Ես էն թագավորն եմ, հախ ունես դու, իմ ախչիկ քզիկ հալալ էղնի, հմկա իմ ձեռկով պիտի զձզիկ պսակեմ ու դնեմ իմ տեխ թագավոր։

Նոր ըռընճբար տարավ զուր հ՚օդեք ցուցուց թագավորին ու ուր վա-զիրին։

---

* Հոս հեքիաթ պատմող մեկ ալ կրկնեց, բայց մենք զանց ըրինք գրելու (Ս. Ռ.)։

Թագավոր վերուց զրոընճբարն ու զախչիկն էկավ, բերեց պսակեց ու ուր տեխ դրեց Թագավոր, փրցավ ազատավ։

Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնեք ձըր մուրազին։

Աստծուց հ՚իշավ իրեկ խնձոր, մեկ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե՝ անկաճ էնողին։